# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2026 թվականի կարիքների համար ամպային ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 25.11.2025թ. N 471/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.12.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Գալստյանը, Ձ.Աղաջանյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**
**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ս.Պատուրյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-26/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (ք. Աբովյան, Խաղաղության-1)

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| Հ/Հ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ծառայության անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | պլանավորված ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱ Հ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ | Ամպային ծառայություններ | 30 098 508.34 | 20% | 36 118 210 | 36 454 000 |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

**5. Հանձնաժողովը որոշեց՝**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3 Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս.Պատուրյան

Անդամներ՝ Գ.Գալստյան

Ջ.Աղաջանյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան